

2014 թվականի **22**-րդ օրվա օրագրության օրվա ձեռնարկային օրագրության օրագրության օրագրության, օրագրության օրագրության օրագրության, օրագրության օրագրության օրագրության օրագրության օրագրության օրագրության օրագրության օրագրության «Վերականգնողական օրագրություն» օրագրության :

Դահլիճում ներկայացված էին նկարիչներ **Լ.Բոյախչեւի, Գ.Գրիգորյանի, Ա.Դիլբարյանի, Լ.Ճողոշվիլու, Թ.Մաճավարիանու, Շ.Մատուաշվիլու` Ա.Պիրադովի** անձնական հարուստ հավաքածուի նմուշներ հանդիսացող գեղանկարչական աշխատանքները, որոնց Ալեքսանդր Բոգդանովիչը տալիս էր հետաքրքիր բացատրություններ, թե այս կամ այն գեղանկարում ինչ է պատկերված եւ, թե ինչ է ցանկացել արտահայտել հեղինակը:

Դաշնամուրային կատարումներով հանդես եկավ **Ա.Խաչատրյանի** տուն-թանգարանի տնօրեն, կոնսերվատորիայի պրոֆեսոր **Արմինե Գրիգորյանը**: Ալեքսանդր Պիրադովը նշեց, որ Արամ Խաչատրյանի երաժշտությունը հայկական լինելով հանդերձ, այնուամենայնիվ, թիֆլիսյան է:

Հայ եւ վրաց բանաստեղծների ու կոմպոզիտորների ստեղծագործությունները կատարեցին **Վաթա Ազարաշվիլին, Վիլլի Գրիգորյանը, Անրի, Քրիստինա եւ Ռեգինա Մեյրաբովները, Թբիլիսիի** հայկական պետական թատրոնի դերասան **Սամվել Էլբակյանը, Թամարա Յաշակյանը, Բաջանա Ցիրկվաձեն**:

Ա.Պիրադովը ողջ երեկոն վարեց երիտասարդական ավյունով: Ժպտադեմ հանդիսականները միմյանց ականջին շշուկով հարցնում էին, արդյոք նա 81, թե 51 տարեկան է: Մեկը պնդում էր, թե 81 է, մյուսը` թե 51, իսկ մտերիմները նրան կանչում էին ուղղակի «Պյադյա Շուրիկ»:

Կատարողական համարների արանքում **Ա.Պիրադովը** հետաքրքիր դեպքեր էր պատմում թիֆլիսի կյանքից, արտասանում հայ եւ վրաց բանաստեղծների, ինչպես նաեւ Օսիպ Մանդելշտամի ստեղծագործություններից:

Պատմեց, թե ինչպես է մի հնավաճառից գնել անվանի հայ նկարիչ **Էդգար Շահինի** աշխատանքը, որը ժամանակին հեղինակը նվիրել էր Ալեքսանդր Շիրվանզադեին:

Ա.Պիրադովը ներկաներին հիացնում էր իր արտիստիզմով, ժեստերով, դիմախաղով: Չնայած առաջացած տարիքին կենսախիճն էր, սուր հումորով, պայծառ հիշողությամբ, բարձր ինտելեկտով, փայլում էր իր անսպառ գիտելիքներով կերպարվեստի, երաժշտության, պոեզիայի, թատրոնի մասին: Ազատ խոսում եւ արտասանում էր գրական հայերեն, վրացերեն եւ ռուսերեն:

Բոլոր կատարումները ավարտվում էին բուռն ծափահարություններով: Հանդիսատեսը հիմնականում նախկին թբիլիսցիներն էին, տարեց պապիկներ ու տատիկներ: Մարդիկ երեկոյից հեռացան իրենց հետ տանելով հետաքրքիր տպավորություններ ու անջնջելի հիշողություններ:

ՕՐԱԿՐԱԿԱՆ ՊԱՐԿՈՒՄ
ՕՐՐ
ՕՐԱԿՐԱԿԱՆ ՊԱՐԿՈՒՄ